

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63-1**

ք. Երևան

« 29 » հոկտեմբեր 2020թ.

Հանրապետության նախագահի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավարի տեղակալ Խ. Պողոսյանի, որը գործում է Հանրապետության նախագահի աշխատակազմի կանոնադրության և Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի 28.04.2020թ.-ի Հ-75-Ա հրամանի հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Բալոյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

1


2.1.8 Ձննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսակնու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 10051300 /տասը միլիոն հիսունմեկ հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուղացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

Հանրապետության նախագահի աշխատակազմ
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 26/1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011204261
ՀՎՀՀ 00006505



Handwritten signature of the Buyer.

ՎԱՃԱՌՈՂ

«Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ
ք. Երևան, Ավան, Սայաթ-Նովա 1/5 31
«Էվկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660009853400100
ՀՎՀՀ 00870968

Handwritten signature of the Seller.
/Ս. Բալոյան/



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆԱՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ		Ապրանքի		ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը	անվանումը	միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՀԱ ղաավարգման (CPV)	Հրդեհի հայտնաբերման համակարգ	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը	Ապրանքի				
									չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր համարակալը	մատակարարման ենթակալան անվանումը
1	31625100/2	Հրդեհի հայտնաբերման համակարգ	Հրդեհի հայտնաբերման համակարգը ապահովում է 7800 մ2 տարածքի հրդեհային ահազանգումը, հրդեհային շեֆերի վիճակի մասին տեղեկատվության հավաքագրումը, մշակումը, փոխանցումը, ցուցադրումը և գրանցումը:*	Հրդեհի հայտնաբերման համակարգն իր մեջ ներառում է:	Հրդեհի հայտնաբերման համակարգը ապահովում է 7800 մ2 տարածքի հրդեհային ահազանգումը, հրդեհային շեֆերի վիճակի մասին տեղեկատվության հավաքագրումը, մշակումը, փոխանցումը, ցուցադրումը և գրանցումը:*	Հրդեհի հայտնաբերման համակարգը ապահովում է:	Հրդեհի հայտնաբերման համակարգը ապահովում է:	Հրդեհի հայտնաբերման համակարգը ապահովում է:	հատ	10051300	10051300	1	Մինչև 2020թ. -ի դեկտեմբերի 25-ը:

							• Համակարգում պետք է ներառվի սնուցման սարքեր 24+1 աշխատանքային ռեժիմով աշխատող, • Մոնիթորինգը պետք է կատարվի հրդեհային չայլովով մալուխներով • մալուխները անցկացնել սարքից սարք, ամբողջական, առանց լրացուցիչ միացումների, բոլոր միացումները պետք է կատարվեն սարքերի պտուտակների կամ միացման այլ դետալների միջոցով, • մալուխների մոնիթորինգը իրականացնել համապատասխան մալուխատարերով (լինեն քողարկված), որոնք պետք է պտուտակներով ամրացվեն պատերին և առաստաղին, • շենքերի կապը ապահովել դրսի համար նախատեսված արևապաշտպան, ցրտակայուն և ջրակայուն մալուխով • շենքերի կապն ապահովելուց՝ լրացուցիչ միացման կարիքի դեպքում, դրանք կատարել հատուկ միացման դետալներով և հերմետիկ միացման տուփերի միջոցով, • միացման տուփերն ընտրել առնվազն IP65 պաշտպանվածության աստիճանով, • բոլոր սարքավորումները պետք է աշխատեն որպես մեկ ընդհանուր համակարգ • Համակարգի աշխատանքը պետք է ապահովված լինի մոնիթորինգային համակարգով, որը հնարավորություն կտա օպերատորին 24/7 ռեժիմով վերահսկել համակարգի անխափան աշխատանքը: • ընդունիչ- հսկիչ և պահուստային սնուցման սարքերը հարկերում բողարկել տուփերում: • նախատեսել 2 հատ առնվազն երկու մուտքանի մուտքային մոդուլ՝ հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգերի հետ ինտեգրելու համար, որոնցից օպերատորը պետք է ընդհանուր մոնիթորինգի համակարգի վրա ստանա աշխատունակության և գործարկվելու մասին ինֆորմացիաները, բայց չունենա հնարավորություն՝ ազդելու դրանց վրա: • համակարգի մոնիթորինգը և գործարկումը պետք է իրականացնի մատակարարը,
--	--	--	--	--	--	--	--

			1 հատ RS485 ինտերֆեյս, 1 հատ USB ինտերֆեյս, - հոսանքի մեուցումից անկախ հիշողություն՝ բոլոր իրադարձությունները գրանցելու համար, - առնվազն 1750 հատ լարային հասցեային սարք միացնելու հնարավորություն, - վերջին առնվազն 10000 հատ պահվող իրադարձություն, - համակարգի վերին մակարդակի կապը ապահովող ինտերֆեյսի գծի երկարությունը 1000մ:
1.3	Հասցեական գծի ղեկավարման և ընդարձակման վահանակ	TEKO АСТра -А РПА	3 հատ Հասցեական ընդլայնիչը նախատեսված է հղիեռային եւ անվտանգության ահազանգման հասցեական համակարգերի ազդասարքերի միացման համար: Ունի հետևյալ տեխնիկական հնարավորությունները. - միացման 2 կապի գիծ, 3000 մետր թույլատրելի երկարությամբ - մեկ հասցեական գծի վրա առնվազն 250 հասցեային սարք միացնելու հնարավորություն, - RS485 ինտերֆեյս կենտրոնական կահանկին միանալու համար:
1.4	Հասցեական ծխի տվիչ	TEKO АСТра-42А	364 հատ Ծխի տվիչը օպտիկա- էլեկտրական երկու տարրի միջոցով ապահովում է հրդեհների հայտնաբերում ծխի արտանետման հետևանքով: Ունի հետևյալ տեխնիկական հնարավորությունները. - մինչև 110 մբ տարածքի վերահսկում (3.5մ բարձրություն), - միկրոպրոցեսորային ազդանշանի վերլուծություն, - տարածքի ջերմաստիճանի չափում, - երկգույնանի ծխի հայտնաբերման մեթոդ, կետծ ահազանգումներից խտասփելու համար, - ղեկավարման սարքի հետ համապատասխանելիություն, - հաղորդակցության հասցեական գծի միջոցով, ընդունիչ-հսկիչ սարքի հետ, էլեկտրաէներգիայի և ինֆորմացիայի երրկողմանի փոխանակման հնարավորություն - ծխի խտությունը չափելու հնարավորություն և չափման արդյունքները մշակելու և «Հրդեհ» ազդանշանի ձեւավորման հնարավորություն, - ինդիկատոր գործող ռեժիմի վերաբերյալ, - մեխանիկական և օպտիկական փորձարկման մեթոդ, - առկայծող հոսքի ձգողականության զգայունություն ոչավելի, քան 0.05-ից մինչև 0.20 դԲմ հնարավորություն, - հասցե, որը ցույց է տալիս հասցեական գծի ու տվիչի հասցեները, 10 ս /վ օդային հոսքի արագության դեպքում աշխատունակությունը պահպանելու հնարավորություն:
1.5	Հասցեական ջերմային տվիչ	TEKO АСТра-43А	164 հատ Տվիչի միացման ջերմաստիճանը կազմում է առավելագույնը 54 -70 °C: Այն ջերմաչափող տարրի միջոցով անընդհատ չափում է տարածքի ջերմաստիճանը և տվյալները հասցեական գծի միջոցով փոխանցում է ընդունիչ –հսկիչ սարքին: Ունի հետևյալ տեխնիկական հնարավորությունները. - մինչև 25մբ տարածքի վերահսկում(3.5մ բարձրություն) - միկրոպրոցեսորային ազդանշանի վերլուծություն,

1.6	Հասցեական ձեռքի տվիչ	TEKO ԱՏՐԹ-45A	• տարածքի ջերմաստիճանի չափում, • ղեկավարման սարքի հետ համապատասխանելիություն, • հաղորդակցության հասցեական գծի միջոցով, ընտրելի-հսկիչ սարքի հետ, էլեկտրաէներգիայի և ինֆորմացիայի երրկողմանի փոխանակման հնարավորություն, • չափման արդյունքները մշակելու և «Հրդեհ» ազդանշանի ձեւավորման հնարավորություն • ինդիկատոր գործող ռեժիմի վերաբերյալ, • մեխանիկական և օպտիկական փորձարկման մեթոդ, • հասցե, որը ցույց է տալիս հասցեական գծի ու տվիչի հասցեները: <u>36 հատ</u> Տվիչի նախատեսված է համակարգը ձեռքով գործարկելու համար: Ունի ունի հետևյալ տեխնիկական հնարավորությունները. • ղեկավարման սարքի հետ համապատասխանելիություն, • հաղորդակցության հասցեական գծի միջոցով, ընտրելի-հսկիչ սարքի հետ, էլեկտրաէներգիայի և ինֆորմացիայի երրկողմանի փոխանակման հնարավորություն, • կոճակի սեղանն միջոցով մարդու օգնությամբ «Հրդեհ» ազդանշանի ձեւավորման հնարավորություն, • ինդիկատոր գործող ռեժիմի վերաբերյալ, • մեխանիկական և օպտիկական փորձարկման մեթոդ, • հասցե, որը ցույց է տալիս հասցեական գծի ու տվիչի հասցեները, • միկրոպրոցեսորային ազդանշանի վերլուծություն:
1.7	Լուսաձայնային ազդարար լրակազմ	TEKO ԱՏՐԹ-10 իսք. 3 ԱՏՐԹ-ԵՍԹ	<u>37 հատ - ԱՏՐԹ-10 իսք. 3</u> <u>19 հատ - ԱՏՐԹ-ԵՍԹ</u> Ազդարարը նախատեսված է լուսային և ձայնային ազդանշանով ահազանգելու իրդեհի մասին: Ազդարարը հասցեական է և ունի հետևյալ տեխնիկական հնարավորությունները. Ունի ունի հետևյալ տեխնիկական հնարավորությունները. • ղեկավարման սարքի հետ համապատասխանելիություն, • հաղորդակցության հասցեական գծի միջոցով, ընտրելի-հսկիչ սարքի հետ, էլեկտրաէներգիայի և ինֆորմացիայի երրկողմանի փոխանակման հնարավորություն, • ձայնային ճշման մակարդակ, ոչ պակաս քան 95 դեցիբել • ընտրելի հսկիչ սարքի կողմից ավտոմատ ղեկավարվող ներկատուցված ռելե, որի միջոցով միանում է լուսաձայնային ազդանշանը • հասցե, որը ցույց է տալիս հասցեական գծի ու ազդարարի հասցեները, • ինդիկատոր գործող ռեժիմի վերաբերյալ, • հասցեային ռելեի մոդուլ (2 ռելե, 19 հատ - ԱՏՐԹ-ԵՍԹ):
1.8	Մոտոքային մոդուլ 4 մոտոքանի	TEKO ԱՏՐԹ-ԵՍԹ	<u>2 հատ</u> Ունի հետևյալ տեխնիկական հնարավորությունները. • ղեկավարման սարքի հետ համապատասխանելիություն, • աշխատում է հասցեական կապի գծում, • չորս լարային բաժինների միացում:

1.9	Մուտքային մոդուլ 2 մուտքանի	TEKO Астра-МА	<u>2 հատ</u> Ունի հետևյալ տեխնիկական հնարավորությունները. • ղեկավարման սարքի հետ համապատասխանելիություն, • աշխատում է հասցեական կապի գծում, • երկու լարային բաժինների միացում:
1.10	Ռեկային մոդուլ 4 ելքանի	TEKO Астра-823	<u>5 հատ</u> Ունի հետևյալ տեխնիկական հնարավորությունները. • ղեկավարման սարքի հետ համապատասխանելիություն, • տեղեկատվության փոխանակում կառավարման վահանակի հետ լարային RS-485 ինտերֆեյսի միջոցով, • 4 ղեկավարման գիծ, որոնցից երկուսը գծի վնասման վերահսկումով:
1.11	Շլեյֆի մեկուսացման սարք	TEKO Астра-А ИПС	<u>13 հատ</u> Ունի հետևյալ տեխնիկական հնարավորությունները. • ղեկավարման սարքի հետ համապատասխանելիություն, • համակարգի հասցեական հաղորդակցման գծի կտրման և կարճ միացման վերահսկում և վնասված հատավածի իզոլացում:
1.12	Չորկիզվող մալուխ	Инвест Арсеанал, Паритет, 1x2x0,5 մմք. FRLS	<u>8000 մետր</u> Մալուխները նախատեսված են հատուկ հորեհային համակարգում օգտագործելու համար, բաղկացած են 2 լարից: Витая пара» տիպի են: Ունեն հետևյալ տեխնիկական հնարավորությունները. • առնվազն 180 րոպե դիմացկունություն կրակին:
1.13	Մարտկոց	Energine 12v7A	<u>6 հատ</u> Ունի հետևյալ տեխնիկական հնարավորությունները. • 12վ • 7Աժ
1.14	Մալուխ	ИТК F/UTP CAT5 LDPE տրոսով	<u>300 մետր</u> Ունի հետևյալ տեխնիկական հնարավորությունները. • հաղորդիչի հաստությունը 0,51մմ • 24 AWG • հաղորդիչի նյութը պոլիէթ • հաղորդիչների քանակը 4*2 • կատեգորիա cat5e • մալուխի արտաքին տրամագիծը $9,2 \pm 0,2$մմ • մալուխային ծածկի զույնը սև:
1.15	Սակառ	Պոլիստով 16մմ*16մմ	<u>6000 մետր</u> Ունի հետևյալ տեխնիկական հնարավորությունները. • Սպիտակ:

1.16	Համակարգիչ և մոնիտոր 24" (լրակազմ)	Core i3	1 հատ. Նախատեսված է օպերատորի ավտոմատացված աշխատատեղի համար, ունի ծրագրային ապահովում՝ հղիչային ահազանգման համակարգի ղեկավարման և վերահսկման համար: - մոնիտոր 24" - համակարգիչ Core i3, Ram 4GB, HDD 500GB, LAN 1Gbit, համակարգչային մկնիկ, ստեղնաշար:
1.17	Պահուստային սնուցման աղբյուր	Полисервис БРП-И-12-5/14	1. էլեկտրաէներգիայի գնահատված լարում 12 վոլտ 2. Մարտկոցը լիցքավորվում է էլեկտրաէներգիայի աղբյուրից 3. Մարտկոցային էլեկտրամատակարարում էլեկտրաէներգիայի ծախսողման դեպքում 4. գերբեռնվածության և ելքային կարճ միացման պաշտպանություն 5. Մարտկոցի պաշտպանություն խորը լիցքաթափումից 6. Տրանսֆորմատորի պաշտպանություն ինտեգրված ջերմային ապահովիչով:

Հորեի հայտնաբերման համակարգն ընտրվելու համար պարտադիր պայման է հանդիսանում դրանց վերաբերյալ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հղիչային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրամադրված դրական եզրակացության առկայությունը:

* Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

ԳՆՈՐԴ

Հանրապետության նախագահի աշխատակազմ
 ք. Երևան, Մարշալ Բաղդասյան պող. 26/1
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Հ/Հ 900011204261
 Հ/Հ 00006505



ՎԱՃԱՌՈՂ

«Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ
 ք. Երևան, Ալան, Սայաթ-Նովա 1/5 31
 «Էլիկաբանկ» ՓԲԸ
 Հ/Հ 1660009853400100
 Հ/Հ 00870968

Ու. Բաղդասյան



Հավելված N 2
«29» հոկտեմբերի 2020թ. կնքված
ՀԱԱ-ԳՀԱԴՁԲ-20/63-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ												
Սպորանքի			ՀՀ դրամ									
Իրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Պահանջարկի նկարագրությունը՝ ըստ ամփոփման 2020թ-ին՝ ըստ ամփոփման, այդ թվում	Մեքսիկո	Մեքսիկո	Մեքսիկո	Մեքսիկո	Մեքսիկո	Մեքսիկո	Մեքսիկո	Մեքսիկո	Մեքսիկո
1	31625100/2	Հրդեհի հայտնաբերման համակարգ										

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են անողական կարգով:

ԳՆՈՐԴ

Հանրապետության նախագահի աշխատակազմ
ք. Երևան, Մարշալ Բաղդասարյան պող. 26/1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011204261
ՀՀ 00000505

ՎԱՃԱՐՈՂ

«Բալոյան Երեմյան» ՍՊԸ
ք. Երևան, Ավան, Սայաթ-Նովա 1/5 31
«Էվկարան» ՓԲԸ
ՀՀ 1660009853400100
ՀՀ 00870968



Handwritten signature in blue ink.

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների						
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
« 29 » հոկտեմբերի 2020թ. կնքված
ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____

Գնորդի անվանումը

Վաճառողի անվանումը

(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած

ազգանուն, անուն

ստորագրություն